ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԿՅԱՆՔԸ 1950 ԹՎԻՆ

Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարությունը, Դավանության նախարարության միջոցով, ռումինահայ թեմին հատկացրել է 1.500.000 լեյ, որի շուրջ 1.100.000 լեյը նեղկայացնում է հոգևորականության 1950 թվի ռոճիկները, իսկ 400.000 լեյը տրամադրվել է թեմի եկեղեցիների նորոգության և այլ կարիքների։

Ռումինահայ թեմի Առաջնորդ Վազգեն Ե. վարդապետը հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում այցելել է եկեղեցական համայնքներին և հորդորել հավատացյալներին՝ հավատարիմ մնալ տեղական իշխանությանց, Մայր Հայրենիք Սովետական Հայաստանին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Առաջնորդ Հայրը կոչ է արել նաև հայ ժողովրդին՝ նեցուկ լինել խաղաղության պաշտպանությանը։ Նա զբաղվել է նմանապես վարչական և կազմակերպչական հարցերով։

Հուլիսի 2-ին, թեմի եկեղեցիներում կատարվել է Հայրապետական մաղթանք, նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի օծման 5-րդ տարեդարձի առթիվ և խոսվել ավուր պատշաճի քարոզ։ Բուխարեստում քարոզել է Առաջնորդ Հայրը, արտահայտելով իր հիացմունքը և երախտագիտական զգացմունքները Վեհափառ Հայրապետի և նրա գործի հանդեպ։

Հոկտեմբերի 8-ին, Բուխարեստի հայոց եկեղեցում տեղի է ունեցել Պատարագ և Հոգեհանգիստ՝ նվիրված անմահ Կոմիտաս Վարդապետի հիշատակին։ Առաջնորդ Հայրը խոսել է մեծ երաժշտագետի կյանքի և գործի շուրջը։ Գաղութում Կոմիտասի հիշատակը պանծացվել է նաև Հայկական դեմոկրատ կոմիտեի կազմակերպած այլ հանդիսություններով։

Հոկտեմբերի 26-ի կիրակի օրը Բուխարեստի հայոց եկեղեցում Առաջնորդ Հայրը հանդիսավոր կերպով ընթերցել է Վեհափառ Հայրապետի Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակի հոբելյանական տոնակատարությանց նվիրված հայրապետական կոնդակը։

Ռումինահայության մեջ ջերմ ընդունելություն են գտել Վեհափառ Հայրապետի խաղաղության պահպանման ի նպաստ կոչերն ու ձեռնարկումները։ 1950 թվի ընթացքում այդ նպատակին հատկացված մաղթանքներ են կատարվել և հոգևորական դասը հանդես է եկել հատուկ կոչերով։

Երեք Եկեղեցիների Հոգևոր Պետերի 1950 թվի օգոստոսի 5-ին Բրիլիսիում ստորագրած խաղաղության կոչը առանձին քարոզի նյութ է դարձել։ «Էջմիածին» ամսագրի հուլիս-օգոստոս համարը, նվիրված Բրիլիսիի խորհրդաժողովին և Այնքսել ու Կալիստրատ Պատրիարքների Սովետական Հայաստան այցելության, ռումիներենի թարգմանվելով ներկայացվել է Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Ժուստինյան Սրբազան Հոր։

Նոյեմբերի 16-ին, ռումինական դավանության պետերի կողքին, Առաջնորդ Հայրը ռումինահայ եկեղեցու անունից ստորագրել է խաղաղության ի նպաստ այն ուղերձը, որն, ուղարկվել է Վարշավայում գումարված խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսին։ Նույն նպատակին Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքարանում տեղի է ունեցել խորհրդակցություն, որտեղ ներկա են եղել բոլոր դավանությանց պետերը, բացառությամբ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցչի։ Ժողովում ընդունվել է կոչ խաղաղության պահպանության ի նպաստ, ուղղված Ռումինիայում բնակվող բոլոր դավանությունների հավատացյալներին։ Կոչը լույս է տեսել մամուլում և կարդացվել եկեղեցիներում։ Հայոց եկեղեցիներում այն ընթերցվել է 1951 թվի հունվարի 6-ին և 7-ին։

Սույն ժողովում Հայ Եկեղեցու անունից խոսք է ասել Առաջնորդ Հայրը, խոստանալով խաղաղության պահպանման գործում հայ ժողովրդի նպաստը բերել Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկային, որը, Սովետական Միության կողքին, պայքարում է խաղաղության օգտին։ Առաջնորդ Հայրը հայտարարել է թե հայ ժողովուրդն անվարան ընտրում է խաղաղությունը, փառությունը և կյանքը։

Առաջնորդ Հայրը խաղաղության ի նպաստ խոսք է ուղղել նաև մեր ժողովրդին ռումներեն լեզվով, որը լույս է տեսել Բուխարեստի «Ունիվերսուլ» օրաթերթի դեկտեմբերի 24-ի համարում։ Հոգեշնորհ վարդապետը կոչում ընդգծել է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի խաղաղասիրական ոգին ու ձգտումները և անխախտ հավատք հայտնել խաղաղության գործի հաղթանակի շուրջ։